ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ

ՌԻԳԱՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]
(Շարունակություն)

Ռ.Կ.Կ.Կ. ընկ. ՄՈԼՈՏՈՎԻՆ
Արտ. Գործ. Ժող. Կոմ. Ընկ. ՉԻՉԵՐԻՆԻՆ

Հարգելի Ընկերներ:

Չնայած այն բանին, որ ես, ստանալով, «Դաշնակների» հետ բանակցությունները իմ վրա վերցնելու առաջարկությունը, թե գրավոր կերպով և թե հեռագրով Կ. Կ. – ից դիրեկտիվներ ու հրահանգներ խնդրեցի, նման ոչ մի բան ես չստացա: Ընկ. Ընկ. Տեր-Գաբրիելյանն ու Տեր-Վահանյանը նույնպես բացարձակապես ոչ մի դիրեկտիվ չբերեցին:

Ուստի, համատեղ քննարկելով բանակցությունները վարելու մնթոդի հարցը, մենք որոշեցինք դրանք վարել այնպես, որ հնարավորին չափ ավելի շատ բան դուրս կորզենք ու իմանանք մեր հակառակ կողմի ներկայացուցիչներից, միևնույն ժամանակ նպատակ չունենալով ինչ-ինչ համաձայնության հանգելու նրանց հետ:

Բայց բանակցությունների ընթացքում պարզվեց, որ համաձայնությունը Դաշնակների հետ նախ միանգամայն նպատակահարմար է, իսկ երկրորդ՝ հեշտությամբ կարելի է ձեռք բերել: Ուստի մենք վերջիվերջո մշակեցինք նման համաձայնության մոդուսը, և հարցը բաց թողնելով մինչև ստանանք Ձեր որոշումը, Ձեզ ենք ուղարկում մշակված փաստաթղթերը, առայժմ ոչինչ չպարտավորվելով և բոլոր հայտարարություններն անելով **միայն անձամբ մեր անունից:**

Ինձ թվում է, որ մեր մշակած համաձայնությունը թե ձևականորն և թե ըստ էության միանգամայն նպատակահարմար է և պետք է ընդունվի մեր կողմից և քանի որ անձամբ ես դեռ չեմ ունեցել մի դեպք, երբ Կենտկոմը կամ Կառավարությունը համաձայն չլինեն իմ, նույնիսկ անձամբ իմ անունից տրված հայտարարություններին, ապա ես ուզում եմ սույն զեկուցագրում Ձեզ շարադրել ինչպես մեր տպավորությունները, այնպես էլ հարցի մեզանում ստեղծված քաղաքական գնահատականը լայն իմաստով և մասնավորապես տվյալ իրավիճակում, այն հույսով, որ այդ ժամանակ Դուք կհամաձայնեէ մեզ հետ: Իհարկե, ավելի լավ կլիներ, եթե ես

[1] Սկիզբը տե՛ս «Պատմություն և քաղաքականություն», թիվ 2/3/, թիվ 4/5/, 2019թթ.:

կարողանայի գալ բանավոր զեկուցման համար, բայց դա անհնար է, և անհրաժեշտության դեպքում նման զեկուցում կանեն ընկ. ընկ. Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը:

Ամենից առաջ տպավորությունների մասին: Առաջին անգամ չէ, որ ես ստիպված եմ լինում բանակցություններ վարել Դաշնակների հետ /Բեռլինում նույնպես ես խոսել եմ նրանց հետ/ և երկրորդ անգամ ես այն տպավորությունն ստացա, որ մեր բոլոր հակառակորդներից, որ այսպես կոչված սոցիալիստական լագերից, դաշնակները ամենից շուտ համոզվողներն են ու ամենից հանդուրժողական: Ըստ երևույթին, նրանք իրենց դիրքորոշումը չունեն տնտեսական ու պետական-քաղաքական հարցերում. Հայաստանի և հայ ժողովրդի գոյության հարցը գերակայում է բոլոր հարցերից և խորհրդային վարչակարգը որպես այդպիսին, պրոլետարական հեղափոխությունը որպես այդպիսին, վերջապես, նույնիսկ կոմունիստական ծրագիրն ըստ էության նրանց քիչ է հետաքրքրում և անհամեմատ ավելի քիչ են վանում մեզանից, քան քաղքենիական լագերից մյուս բոլոր այսպես կոչված սոցիալիստներից ու հեղափոխականներից:

Մյուս կողմից, ակնհայտ է, որ Հայաստանի ճակատագիրը նրանց համար այն աստիճան կարևոր է, որ այդ հարցերի վերաբերյալ համաձայնություն տալու անհնարինության դեպքում նրանք պատրաստ են դիմել ամեն տեսակ արկածախնդրությունների: Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ նրանք, վրաց մենշևիկների նման, այդ դեպքում ամբողջ աշխարհով մեկ ագիտացիա են մղելու մեր դեմ/ինչը միջազգային պրոլետարական շրջապատում հայկական հարցի ունեցած ավանդական ժողովրդականության դեպքում, ամենուրեք գոյություն ունեցող նրանց արտասահմանյան կազմակերպությունների ուժեղ համախմբվածության ու հարդտության պայմաններում, անհամեմատ ավելի մեծ բարիք կլիներ, քան թե Չխեիձեի, Ժորդանիայի, Չխենկելիի ու մյուսների արտասահմանյան ելույթները/, բայց ինձ թվում է, որ նրանց նշանակելի արկածախնդրականության պայմաններում, նրանք, իրոք պատրաստ են դիմելու ահաբեկչության զենքի և հետապնդել մեր արտասահմանյան ներկայացուցիչներին ու Ռուսաստանում եղած առաջնորդներին:

Դրա հետ մեկտեղ այն տպավորությունն է ստեղծվում, որ խորհրդային իշխանության գոյությունը Հայաստանում նրանց համար իզուր չի անցել, ինչպես իզուր չի անցել նաև մինչև այժմ ՌՍՖԽՀ-ի գոյության փաստը և վերջինիս գնալով աճող ուժը, իսկ քանի որ միևնույն ժամանակ նրանք խիստ հուսահատվեցին բուժական տերությունների օգնության ու աջակցության հնարավորության գործում, ապա, ես կարծում եմ, որ նրանք անկեղծորեն ու ազնվորեն պատրաստ են համագործակցելու

խորհրդային իշխանության հետ Հայաստանում և վերստին վերադարձել են իրենց կողմնորոշմանը դեպի Ռուսաստանը:

Իր ժամանակ նրանց առաջնորդները Գերմանիայում, որոնք բոլոր շեմքերն էին մաշում այնտեղ, ինձ ասում էին, որ եթե Ռուսաստանը «չհեռանար» Հայաստանից, իրենք առաջվա նման ոչ ոքից այլ օգնություն չէին ցանկանա և կողմնորոշվելու էին միայն դեպի մեզ: Այն տպավորությունն է ստեղծվում, որ բավականին թրև գալով «մեծ տերությունների» նախասենյակներում, նրանք հիմա, երբ Ռուսաստանը նորից «եկավ» Հայաստան, պատրաստ են մոռացության տալու իրենց հին երկպառակությունները և օգնություն ու փրկություն են սպասում միայն մեզանից:

Կասկած չկա, որ նրանք ամեն կարգի բանակցություններ ունեցել են նախ՝ հակախորհրդային առաջնորդների հետ, և երկրորդ՝ քեմալականների հետ: Իրենք էլ այդ բանը չեն միտում, պնդելով, սակայն, որ դրանք եղել են միայն ոչ պաշտոնական խոսակցություններ առանձին պետական գործիչների, որպես մասնավոր մարդկանց հետ:

Կասկած չկա նաև, որ նրանց մոտ բոլորովին աղավաղված պատկերացում էր ստեղծվել մեր արտաքին քաղաքականության մասին ընդհանրապես և արևելյան քաղաքականության մասին մասնավորապես մի կողմից և **համոզվածություն, որ Հայաստանի ապախորհրդայնացումը հայկական հարցի լուծմանը մեր ակտիվ մասնակցության պայմանով միայն կարող են լուծել:**

Նրանք այսպես էին դատում. Հայկական հարցը լուծվում է երկու պայմաններում. 1. Անկախ և ինքնուրույն Հայաստանի գոյության դեպքում, 2. Ռուսահայաստանին թուրքական որոշ տարածքներ միավորելու պայմանով: Տվյալ ժամանակ արդեն խոսք չի լինում “Մեծ Հայաստանի” մասին, բայց մի տարածքի մասին, որը ավելի փոքր է, քան “Վիլսոնի գիծը” այն տարածքի մասին, որը հավանաբար …**նունպես պատրաստ են հանձնել նրանց** /ընկ. Ընկ. Տեր-Պատրիելյանը և Տեր-Վահանյանը այն ցույց են տալիս կից քարտեզում /տես 1 հավելվածը/:

Խորհրդային Հայաստանը, այնուհետև դատում են նրանք, - ոչ թե անկախ է, այլ փաստորեն ՌՍՖԽՀ-ի փաստական մասը: Հայկական հարցը վաղուց արդեն դարձել է միջազգային, քանզի մեծ տերությունների մեծ մասը և համաշխարհային պրոլետարիատը իրենց կոնգրեսներում իրենց վրա մի շարք պարտավորություններ են ստանձնել այդ հիմնախնդրի նկատմամբ: Խորհրդային Հայաստանը գոյությունը իրենից վանում է ամբողջ բուժուական աշխարհը և, թեպետ հայկական հարցի լուծումը վերը նշված իմաստով ոլորովին անհնարին է **առանց Ռուսաստանի** սակայն **միայն** Ռուսաստանի ուժերն էլ բավական չեն այն լուծելու: Այստեղից էլ ապա-խորհրդայնացման անհրաժեշտությունը:

Բացի դրանից, թուրքերը, անգամ քեմալականները, իհարկե, Ռուսաստանը համարում են իրենց ավանդական թշնամին, և, եթե պատրաստ էլ լինել տարածքային զիջումներ կատարելու Հայաստանին /ըստ երևույթին նրանք այդ անը նրանց իրոք խոստացել էլ են/, բայց միայն այն պայմանով, եթե այդ զիջումները Թուրքիայից **ոչ թե մերձեցնում, այլ հեռացնում են Ռուսաստանը:** Թուրքերը կարող են հանգիստ սրտով Հայաստանին զիջել այն տարածքները, որոնց մասին խոսվում է, քանզի ներկայումս այդ ապրանքները բնակեցված են քրդերով, որոնք նույնպես թշնամի են Թուրքիային, իսկ վերիջինիս համար անչափ ավելի ձեռնտու է այդ տարածքները տեսնել կուլտուրական հայկական հանրապետության սահմաններում, որը պահպանում է պայմանագրերը և կնքում է Թուրքիայի համար այնպիսի շահավետ պայմանագիր, քան տեսնել վայրենի քրդերի իշխանության տակ, որոնց պայմանագրային ոչ մի հարաբերություն հնարավոր չէ: Բայց իհարկե, այս ամենը շահավետ է Թուրքիայի համար պայմանով միայն, որ դա կլինի Հայաստան, այլ ոչ թե Ռուսաստան՝ կեղծանունով:

Այսպիսով դաշնակները հանգում են **Թուրքիայի և Ռուսաստանի միջև հայկական բուֆերի** գաղափարին: Կասկած չկա, որ այդ գաղափարը նրանց հուշել է Անտանտը, որը ցանկանում է Արևելքում ունենալ նույնը, ինչ որ Արևմուտքում, իսկ կարող է պատահել նաև քեմալականների կողմից, որոնք անկասկած ինչպես միշտ ամեն մի Թուրքիա, որը վարում է երկդիմի քաղաքականություն:

Մեր այն առարկությունները, որ թեպետ ՌՍՖԽՀ-ը ամենևին էլ խորհրդային Հայաստանի կարիքը չունի, սակայն նա չի կարող ցանկանալ նրա ապախորհրդայնացումը, այլ բնույթի պատճառով և ամենից առաջ այն պատճառով, որ որևէ խորհրդային պետության կամավոր ապախորհրդայնացումը առաջադրում է ՌՍՖԽՀ-ի հարցը: Մեր այն առարկությունները, որ **Խորհրդային Հայաստանը** ամենևին չի նշանակում **անկախ Հայաստան**, քանի որ խորհրդային Հայաստանն անգամ մնում է միանգամայն անկախ, բայց միայն ՌՍՖԽՀ-ին բարեկամական երկիր: Վերջապես, մեր այն առարկությունները, որ տվյալ իրավիճակում ամեն մի բուֆեր Ռուսաստանի ու նրա բուժուական հարևանների միջև կարող է գոյություն ունենալ միայն լոկ որպես **խորհրդային**, կամ որպես **հակախորհրդային**, և որ Հայաստանի ապախորհրդայնացման դեպքում վերջինս **անխուսափելիորեն կներքաշվի Ռուսաստանին թշնամի պայքարի մեջ,** ինչը շահավետ չէ նրա համար, 1.Նա նման պայքարում կարող է կործանվել, իսկ 2. Քանի որ իրենց իսկ դաշնակների կարծիքով, Հայկական հիմնախնդիրը չի կարող լուծվել **առանց Ռուսաստանի**, հետևաբար առավել ևս չի կարող լուծվել **Ռուսաստանի դեմ,** մեր բոլոր այս առարկությունները հանգեցրին այն բանին, որ դաշնակները այժմ չեն խոսում ապա-

խորհրդայնացման մասին, թեպետև շարունակում են պնդել, որ իրենց տեղեկությունների համաձայն, քեմալականները չեն համաձայնվի թուրքական տարածքի միացմանը **խորհրդային** Հայաստանին և հարկ կլինի, փաստորեն իշխանությունը թողնելով մեր ձեռքերում, արտաքուստ ստեղծել Խորհրդային Հայաստանի ինչ-որ մի կեղծանուն՝ Հեռավորարևելյան Հանրապետության օրինակով:

Բանակցությունների արդյունքում դաշնակներին լիովին բավարարում է իմ կողմից ձևակերպված նրանց առաջարկությունը մեզ /տես N 3 լրացումը/, որտեղ մենք, ճիշտն ասած արտահայտում ենք միայն այն, ինչ միշտ էլ ասել ենք: Մենք շարունակ պնդում ենք, որ ՌՍՖԽՀ-ի մեջ չմտնող խորհրդային հանրապետությունները միանգամայն անկախ, ինքնուրույն և ինքնիշխան պետություններ են: Հաշտության բանակցությունների ժամանակ, երբ մեր հակառակորդները փորձում են կասկածի տակ վերցնել դա, ես միշտ պաշտոնական ձևով կրկնում եմ այդ ճշմարտությունը: Այստեղ մենք նույնպես **ոչինչ այլ բան** չէինք ասում. Կ. 1: Ինչ վերաբերում է 2-րդ կետին, ապա դեռ Բրեստի ժամանակներից մենք միշտ հենց այդպես ել հասկանում էինք հայկական հարցի լուծումը և միշտ էլ պնդում էինք, որ բոլոր փախստականներն ու արտաքսվածները պետք է վերադարձվեն իրենց տեղերը, քանզի հակառակ դեպքում ժողովրդի իրական ինքնորոշում չկա:

Ճիշտ է, կարող է առարկություն լինել, որ մենք դրանով սպառնում ենք փչացնել մեր հարաբերությունները քեմալականների հետ, քանի որ մենք հավակնում ենք նրանց տարածքներին: Բայց 1. Մենք դրանց հավակնում ենք **ոչ թե մեզ համար, այլ անկախ Հայաստանի համար**, 2. Ես անձամբ նման առարկությունը սխալ կհամարեի հետևյալ նկատառումներով:

Ես շարունակ մատնանշում եմ, որ մեր արտաքին քաղաքականությունը տառապում է ավելորդ **իմպրեսիոնիզմով,** որը մասնավորապես արտահայտվում է նաև այն բանում, որ երբ մենք որոշում ենք մեր շահերից ելնելով պահպանել որևէ պետություն կամ լավ հարաբերություններ պահպանել նրա հետ, մենք, հետապնդելով այդ նպատակը, մոռանում ենք մնացած ամեն բան: Ես շարունակ պնդում եմ, որ հիմա, երբ մեր ներքին քաղաքականությունը կառուցվում է համաշխարհային հեղափոխության ուշացումը կանխատեսելու վրա, մենք և մեր արտաքին քաղաքականությունը ստիպված ենք հաշվի առնել դա, այսինքն՝ մենք պետք է շարունակ կարողանանք գնահատել այն տեսակարար կշիռը, որ մենք ունենք համաշխարհային ասպարեզում և պետք է ավելի ակտիվորեն հանդես գանք այսպես կոչված միջազգային համերգում: **Քանզի, որքան ավելի է դանդաղում համաշխարհային պրոլետարական հեղափոխության տեմպը, այնքան ավելի կարևոր գործոն ենք հանդիսանում մենք խորհրդային պետությունների հետ բուժուական պետությունների այսպես կոչված կոռ-**

պերազման ժամանակաշրջանում: Այս տեսակետից ես միշտ դատապարտել եմ մեր չափից դուրս մեղմ քաղաքականությունը օրինակ Լիտվայի նկատմամբ, որին, իմ կարծիքով, հարկավոր չէ ոչինչ անվճար տալ, հիշելով, որ նա, ինչպես և բոլորը, աշխատում է երկու ճակատով, իսկ առանց մեզ ոչ մի կերպ չի կարող կառավարվել:

Քեմալը նույնպես անկասկած աշխատում է մի քանի ճակատներով և անկասկած է նաև, որ մենք նրան շատ պետք ենք: Եվ մենք նրան պետք ենք ոչ միայն նրա համար, որ նյութական օգնություն ենք ցույց տալիս, այլ գլխավորապես նկատի ունենալով մեր **բարոյական նշանակությունը,** Թուրքիայի աշխատավորական զանգվածները, ինչպես և ամենուրեք, **մեր կողմն են,** և Քեմալի ընկերակցությունը մեզ հետ կբարձրացնի նրա հեղինակությունը այդ զանգվածների աչքում: Ճիշտ է, այդ զանգվածները Թուրքիայում այն աստիճան շերտավորված չեն, որ մենք կարողանանք հետևել նրանց վրա Քեմալի դեմ, այսինքն՝ ազնվական-կալվածատիրական խմբավորման դեմ, բայց Քեմալը չի կարող արդեն գնալ իր աշխատավորների դեմ, այսինքն՝ մեր դեմ: Հայերի, իբրև առավելագույնս ճնշված ժողովրդի շահերի հետևողական պաշտպանությունը մեր կողմից, **բարձրացնում է մեր նկատմամբ վստահությունը նաև մահմեդական ժողովրդական զանգվածների շրջանում, որոնք նույնպես ճնշված են անգամ Թուրքիայում, իսկ ավելի շատ Արևելքի մյուս պետություններում, մեզ մոտ Թուրքեստանում, Աֆղանստանում, Պարսկաստանում, Հնդկաստանում**: Ուստի հարկ չի լինի 2-րդ կետի պատճառով վախենալ Քեմալի հետ հարաբերությունները վատացնելու վտանգից: Վերջապես, 2-րդ կետը, ինչպես և 3-րդ կետը պետք է խելացիորեն իրականացվեն:

Եթե մենք. հենվելով դաշնակների հետ քեմալական բանակցությունների վրա և վեջինների խոստումների վրա առաջիններին /իսկ այս վերջինիս դեմ նրանք ոչինչ չունեն/, մենք Քեմալին կառաջարկենք բանակցությունների մեջ մտնել Հ.Խ.Ս.Հ.-ի հետ մեր միջնորդությամբ, ապա այդ պատճառով, իհարկե, Քեմալը կապերը չի խզի մեզանից, իսկ բանակցությունները կարող են ձգձգվել այնքան, որքան մեզ անհրաժեշտ է: Այդ նույն ժամանակ էլ դաշնակներին համոզելու բոլոր օգուտները գոյություն կունենան:

Իսկ ի՞նչ օգուտներ են դրանք: Ես ենթադրում եմ, որ հայկական հարցը իրոք համակրանք է տանում Եվրոպայի ու Ամերիկայի պրոլետարական զանգվածներում: Երբ հիմա Եվրոպայով մեկ ուղևորություններ են կատարում վրաց մենշևիկներն ու թաթար մուսաֆաթականները՝ ագիտացիա անելով մեր դեմ Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ, “մեր իմպերիալիզմի” ու գործադրած “բռնության” համար, երբ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի պաշտոնաթող կառավարությունները մեր դեմ դաշինք են կնքում արտասահմանում /ինչպես եղել է վերջերս/ և երբ

նրանց պաշտպանում են ամեն կարգի ու ամեն գույնի արտասահմանյան սոցիալ-դավաճանները, ապա մեզ համար **ամենևին շահավետ չէ,** որ այդ բոլոր վայնասուններին միանան նաև հայ դաշնակների ձայները, որոնք ավելի եռանդուն են, քան մյուսները, և իրոք կկարողանան ահաբեկչության դիմել՝ իրենց վրա ուշադրություն գրավելու համար: Եվ ընդհակառակը, մեզ համար **շատ ձեռնտու է**, եթե հայերը դուրս գան Կովկասյան սպիտակգվարդիական դաշինքից և ամենուրեք ագիտացիա մղեն **մեր օգտին**: Հայաստանը առավել տառապյալ երկիրն է և համակրանք է առաջացնում իր նկատմամբ, ուստի **մեր օգտին** հայերի կատարած աշխատանքը արտասահմանում չեզոքացնում է ամեն կարգի ժորդանիաների աշխատանքը **մեր դեմ**: Իսկ մենք դրան հասնում ենք շատ էժան գնով՝ **կրկնելով այն, ինչ շարունակ իրենք էին ասում:**

Բացի դրանից, այդ համաձայնության շնորհիվ Հայաստանն ստանում է հայ մտավորականների մի որոշ կազմ, որոնց կարիքը նա ուժեղ զգում է: Նկատի ունենալով մեր ընկերների այդքան հաճախակի քյալագոզության հետևանքով /տես հավելված N4/ Հայաստանում քյալագոզությունը որոշ չափով կկրճատվի: Չէ որ ընկ. Լենինը անհրաժեշտ էր համարել ընկ. Մյասնիկովին տալ մի փաստաթուղթ, որը ճիշտն ասած կանխում էր քյալագոզությունը /ի դեմ, դաշնակները շատ գոհ են այդ փաստաթղթից/:

Եթե նույնիսկ ենթադրենք էլ, որ դաշինքը դաշնակների հետ, այն կուսակցության քաղքենիական բնույթի շնորհիվ նույնքան էլ կարճատև կլինի, ինչպես եղել է մեր դաշինքը ձախ ս.դ.-ների հետ, ապա այնուհանդերձ մեր բոլոր օգուտները կմնան: Հայ ժողովրդի վստահությունը միշտ կմնա մեր կողմը. Քաղաքացիական պատերազմը Հայաստանում կդադարի, Խորհրդային Հայաստանին կմիացվեն Զանգեզուրը և Ղարաբաղը, մեր հեղինակությունը ամբողջ աշխարհում և մեր դեմ ուղղված ագիտացիան կովկասյան հարցերի վերաբերյալ կվնասազերծվի, միևնույն ժամանակ մենք մեր կողմը կգրավենք Քեմալին, նրան ապացուցելով, որ մեր թիկունքում իր քաղաքականություն վարելը անհնարին է և մենք էլ ամենևին էլ մտադիր չենք նրան օգնություն ցույց տալ մեր նկատմամբ թշնամական վերաբերմունքի դեպքում:

Ահա թե ինչու մենք բոլորս, բանակցություններ վարելով, համաձայնեցինք նախաստորագրել կից փաստաթղթերը, այսինքն՝ ցույց տալ, որ **անձամբ** մենք կողմ ենք ստորագրելու դրանք և ահա թե ինչու ես համառորեն ու վճռականորեն խորհուրդ եմ տալիս Ձեզ համաձայնեցնել մեզ հետ և մեզ թույլ տալ ստորագրելու այդ փաստաթղթերը:

Ձևականորեն գործը հետևյալն է, ոչ մի պարտադիր որոշում ընդունված չէ: Ընկ. ընկ. Տեր-Գաբրիելյանն ու Տեր-Վահանյանը Մոսկվա են մեկնում զեկուցելու համար: Մեզ հետ Կ.Կ.-ի համաձայնության դեպքում

նրանք այնտեղ կստորագրեն փաստաթղթերը և կուղարկեն ինձ, ես իմ կողմից կստորագրեմ և փաստաթղթերը կփախանակեմ դաշնակների հետ, որոնք այստեղ սպասում են Ռ. Կ.Կ.Կ.Կ.ի պատասխանին:

Քանի որ դաշնակները չեն կարող երկար սպասել, իսկ ես էլ նույնպես մտածում եմ շուտով վերադառնալ Ռուսաստան՝ աշխատանքի, ապա Կ.Կ.-ի որոշումը այս հարցի վերաբերյալ պետք է կայանա հնարավորին չափ շուտ:

Եվս երկու խոսք: Դաշնակները ուզում էին, որ մշակվի համաձայնագիր: Ես դրան դեմ դուրս եկա, մատնանշելով **կողմերի** քաղաքականությունն այստեղ և **առաջարկեցի դաշնակների առաջարկության և մեր պատասխանի ընդունված ձևը:** Իսկ ներհայկական հարցում մենք միջնորդությունից բացի, մեզ վրա ոչինչ վերցնել չենք կարող, իմ կարծիքով:

Կոմունիստական ողջույնով՝

Ա. Իոֆֆե /ստորագրություն/

Ռիգա, Վիլպերլինգսհոֆ
14 հուլիսի 1921 թվական